# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 07.01.2026 թվականին կնքված ԼԽՈՒԵՀԿ-ԳՀԱՊՁԲ-26/1-3 գնման պայմանագրի

ք. Երևան «11» փետրվարի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՆՆ ՖՈՒԴ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս. Քաղցյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 07.01.2026թ. կնքված ԼԽՈՒԵՀԿ-ԳՀԱՊՁԲ-26/1-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

Պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, հաստատել ըստ սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

Պայմանագրի թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, հաստատել ըստ սույն համաձայնագրի թիվ 2 հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: **Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ 2026թ. հունվարի 07-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:**

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները կցվում են սույն համաձայնագրին և հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ | «ՆՆ ՖՈՒԴ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | ՀՀ, ք. Երևան, Լամբրոն 27 |
| ՀՀ ՖՆ Թիվ 1 ՏԳԲ | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ՝ 900018002767 | ՀՀ 2481001425090011 |
| ՀՎՀՀ՝ 01504672 | ՀՎՀՀ՝ 02326468 |
| Տնօրենի՝ Ա. Բաբայան | Տնօրեն՝ Ս. Քաղցյան |
| ______________________ | ______________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«07» հունվարի 2026թ. կնքված
ԼԽՈՒԵՀԿ-ԳՀԱՊՁԲ-26/1-3 ծածկագրով պայմանագրի
«11» փետրվարի 2026թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | | հասցեն | ժամկետը*** |
| 6 | 15511100/1 | կաթ, պաստերացված | Էլոլա ՍՊԸ, Դեագա ՍՊԸ, Սևանի հկաթ ՍՊԸ, Տեխաս ՍՊԸ, Արզնի կաթ ՍՊԸ | Կաթ պաստերիզացված: Պաստերացված կովի թարմ կաթ անյուղ կամ առավելագույնը 2,5 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21 0T: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Չափածրարված մինչև 1 լ ստվարաթղթե տուփերով կամ պլաստիկ տարաներով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի 1925-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Մակնշումը՝ ընթեռնելի Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով | լիտր | 799.95 | 319980 | 400 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |
| 9 | 15542100/1 | կաթնաշոռ դասական | Էլոլա ՍՊԸ, Դեագա ՍՊԸ, Սևանի հկաթ ՍՊԸ, Տեխաս ՍՊԸ, Արզնի կաթ ՍՊԸ | Կաթնաշոռ առավելագույնը 9,0% յուղի պարունակությամ, կովի թարմ կաթից, թթվայնությունը՝ 210-240 °T, փաթեթավորված սպառողական տարաներով՝ առնվազն 200գ տուփերով: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: Յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%: Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 | կգ | 1899.84 | 189984 | 100 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:" | | | | | | |
| 22 | 15112150/2 | հավի մսեղիք, պաղեցրած | Նուբարաշենի թ/ֆ, Վլադ Հակոբյան Համակցված Կերերի Գործարան ՍՊԸ, Ագրոթեք Ինվեստ ՍՊԸ, Ոսկե Հավիկ Պլյուս ՍՊԸ, Սպիտակի թ/ֆ | Հավի միս ամբողջական: Հավի միս սառեցրած, բրոյլեր տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, պահված -10-ից մինչև -20 °C ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60 %: Պարտադիր պայմաններ՝ տեղափոխումը միայն ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված համապատասխան թույլտվությամբ տրանսպորտային միջոցներով: Ընդունել ի գիտություն, որ մատակարարի/ներ/ (տավարի միս, հավի միս) պետք է մորթի ենթարկված լինի միայն սպանդանոցներում, ինչպես նաև գնային առաջարկ կարող են ներկայացնել միայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում գրանցված սպանդանոցի հետ պայմանագիր ունեցող կազմակերպությունները: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները վերոհիշյալ չափաբաժինների մասով որակավորման փաստաթղթերի հետ պետք է ներկայացնեն նաև պայմանագրի պատճենը: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Մասնակիցը պարտավոր է որպես որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնել վերը նշված սանիտարական անձնագրերով առնվազն 1 տրանսպորտային միջոց: Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: | կգ | 1196.571 | 418800 | 350 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |
| 31 | 15614200/1 | բրինձ | Մառանիկ ՍՊԸ, Անուշ լինի ՍՊԸ, Ամբար ՍՊԸ | Բրինձ մշակված. «էքստրա» և բարձր տեսակի» ողորված բրինձ, սպիտակ կամ սպիտակի տարբեր երանգներով, մաքուր, բրնձին բնորոշ համով և հոտով, առանց կողմնակի համի և հոտի, կլոր և երկար տեսակի բրինձներ, կոտրած և փշրված հատիկների խոնավությունը՝ ոչ ավել 15 %. թթվայնությունը՝ ոչ ավել 2оT, համաձայն ԳՕՍՏ 6292- | կգ | 419.4 | 83880 | 200 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 93: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 60%: Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: | | | | | | |
| 66 | 03222100/1 | բանան | գյուղմթերք | Բանան. Մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի երկարությունը 12 սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: | կգ | 589.5 | 471600 | 800 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |
| 72 | 15311100/1 | կարտոֆիլ | գյուղմթերք | Կարտոֆիլ. Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, մատակարարվող խմբաքանակի առնվազն 90 %-ի տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 6%: Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը և փաթեթավորումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Մատակարարման կոնկրետ օրը և ժամը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 2 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: | կգ | 189.984 | 474960 | 2500 | ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք | 365 օրվա ընթացքում |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

- Առաջին փուլի մատակարարումը պետք է իրականացվի Գնորդի կողմից պահանջի ներկայացման պահից 20 օրացուցային օրվա ընթացքում, իսկ հաջորդող փուլերինը իրականացվում է հաշվի առնելով, որ հաջորդ օրվա պատվերը Գնորդի կողմից Վաճառողին պետք է ներկայացվի մինչև տվյալ օրվա ժամը 18:00-ն (էլ. փոստի միջոցով հետևյալ հասցեից՝ lxue.dproc@mail.ru և/կամ հեռախոսազանգի միջոցով), իսկ մատակարարումը Վաճառողի կողմից պետք է իրականացվի հաջորդ օրվա ժամը 09:00-09:30 սահմաններում:
- Ապրանքի բեռնաթափումը և տեղափոխումը համապատասխան վայր իրականացվում է Վաճառողի կողմից, իր ուժերով և իր միջոցների հաշվին

- Մեկից ավելի մատակարարների կողմից միևնույն ժամանակ մատակարարման դեպքում, Գնորդի կողմից տեղում որոշվում է սննդամթերքի ընդունման հերթականությունը, իսկ Վաճառողը պարտավորվում է սննդամթերքի հանձնումը իրականացնել ըստ Գնորդի կողմից որոշված հերթականության
- Մատակարարվող սննդամթերքը պետք է ունենա սանիտարահամաճարակային եզրակացություն, մթերքի սանիտարական նորմերի համապատասխանության վերաբերյալ: Մատակարարումները կատարել սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի համապատասխան՝ հատուկ սննդամթերքի տեղափոխման համար կահավորված ավտոմեքենաներով, և որը ունի որոշված կարգով հաստատված և ձևակերպված սանիտարական անձնագիր: Անձը, ով զբաղվում է մթերքի փոխադրմամբ պետք է ունենա հատուկ արտահագուստ (գլխարկ, խալաթ և ձեռնոցներ) նաև բուժհաստատության կողմից տրամադրված սան. գրքույկ հետազոտման համապատասխան նշումներով: Մթերքը պետք է տեղափոխվի պիտակավորված փակ տարայով, որը հետագայում չի օգտագործվում սննդի բլոկում պահեստավորման նպատակով և ենթարկվում է հետագա համապատասխան միջոցներով մշակման:
- Չի թույլատրվում մատակարարել ոչ հերմետիկ փակված, կամ կաղապարը ուռած վիճակում տարայով արտադրանք:
- Վաճառողը ըստ Գնորդի պահանջի ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:
- Արտադրանքը պետք է համապատասխանի արտադրատեսակի համար հաստատված տեխնիկական պայմաններին և ունենա համապատասխան մակնշում (մակնշումը՝ ընթեռնելի):
- Մասնակիցը պարտավոր է որպես որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացնել վերը նշված սանիտարական անձնագրերով առնվազն 1 տրանսպորտային միջոց:
- Մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերքը տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր:

**ԳՆՈՐԴ**

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք

ՀՀ ՖՆ Թիվ 1 ՏԳԲ

Հ/Հ՝ 900018002767

ՀՎՀՀ՝ 01504672

Տնօրենի՝ Ա. Բաբայան

---------------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆՆ ՖՈՒԴ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Լամբրոն 27

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ

ՀՀ 2481001425090011

ՀՎՀՀ՝ 02326468

Տնօրեն՝ Ս. Քաղքցյան

---------------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«07» հունվարի 2026թ. կնքված
ԼԽՈՒԵՀԿ-ԳՀԱՊՁԲ-26/1-3 ծածկագրով պայմանագրի
«11» փետրվարի 2026թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 6 | 15511100/1 | կաթ, պաստերացված | | | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 | 319980 |
| 9 | 15542100/1 | կաթնաշոռ դասական | | | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 | 189984 |
| 22 | 15112150/2 | հավի մսեղիք, պաղեցրած | | | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 | 418800 |
| 31 | 15614200/1 | բրինձ | | | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 | 83880 |
| 66 | 03222100/1 | բանան | | | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 | 471600 |
| 72 | 15311100/1 | կարտոֆիլ | | | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 | 474960 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ փող., 193 շենք
ՀՀ ՖՆ Թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ՝ 900018002767
ՀՎՀՀ՝ 01504672
Տնօրենի՝ Ա. Բաբայան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՆՆ ՖՈՒԴ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Լամբրոն 27
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 2481001425090011
ՀՎՀՀ՝ 02326468
Տնօրեն՝ Ս. Քաղըցյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ